ԹԻՒ 854 ՏԱՐԻ ԵՐԿՈՏԱՍԱՆ ՇԻԲԱԹ 1881 ՀՈԿՏԵՄԲԵՐ 16

ՀԱՅՐԵՆԻՔ

10 Փարայ **ՕՐԱԹԵՐԹ** 10 Փարայ

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Հայրենիք ամեն օր կը հրատարակուի, տարեկան գինն է Պոլսոյ եւ գաւառաց համար 7 արծաթ մեճիտ կանխիկ. գաւառական թղթատարութեան ծախքը մեր վրայ է: Վեցամսեայ եւ եռամսեայ բաժանորդք ալ կընդունուին:

Լրագրոյս վերաբերեալ գիր կամ նամակ պէտք է ուղղել առ Տէր-Խմբագիր Բիզա փաշա խան թ. 14. Խմբագրութեան ուղղեալ գիր ետ չտրուիր: Ծանուցման տողը մէկ անգամի համար 3 դրուշ է. աւելի անգամի համար սակարկութիւն կըլլայ.

ՆԵՐՔԻՆ

Պ. Յովհաննէս Այվազովսքի, հռչակաւոր պատկերահանը քիչ մը ատեն մայրաքաղաքս մնալէ վերջը Աթէնք պիտի երթայ, համբաւաւոր Հելլէն պատմագրերու հետ տեսակցելու համար, որոնցմէ կարեւոր տեղեկութիւններ պիտի քաղէ Յունաստանի հին և նոր պատմութեան վերաբերեալ, անոնցմով ճոխացնելու համար իւր քանի մը պատկերները. ըզրս նկարելու մտադիր է.

Պ. Այվազովսքի Աթէնքէն ալ Հռովմ պիտի մեկնի այս պատկերները գտնելու համար, ուրկէ Լոնտրա պիտի երթայ, զանոնք իւր գործոց թանգարանը ղետեղելու համար: Արդէն անգղիացիք իւր գործոց մէկ մասը սուղ դնով գնած են:

Ցար յոյս կը յայտնէ թէ Լոնտրայի հարուստ յոյները այս անուանի պատկերահանին չոմծերը պիտի փութան գընել:

— Հ. Ղեոնդ Ալիշանի քարտէսները Վենետիկի աշխարհագրական ժողովին մէջ մեծ ընդունելութիւն գտնելով, ժողովը շքադրամ մը շնորհեր է Ալիշեալ հայազգի վարդապետին:

— Սեբաստիոյ պաշտօնական լրագիրը կը ծանուցանէ թէ տեղւոյն կուսակալ Հագգը փաշա, դաղթականները բնակեցնելու պաշտօն ունեցող Մուսթաֆա փաշայի ընկերակցութեամբ գաւառին մէջ սկսած ճանապարհորդութիւնը կը շարունակէ եղեր: Կուսակալը Ամասիայէն Եւդոկիա գացեր է, իսկ Մուսթաֆա փաշա Տիգրանակերտ մեկներ է, կուսակալութեան այլ և այլ գլխաւոր տեղերը նորանոր ճամբայներ շինել սկսեր են:

— Հնդկաստանի լրագիրները կը գրեն թէ Չինաստանի մէջ այս տարի 100,000 կուսալաշք մահմետական եղեր են. իսկ քրիստոնեայ եղողներուն թիւն է 20,000:

— Նաբոլէոնի օրով Եւդինէ կայսրուհին մայրաքաղաքս եկած միջոցին Բերա Հայ կաթոլիկաց Ս. Աստուածածին եկեղեցւոյն 12,000 ոսկւոյ արժողութեամբ փառաւոր պատկեր մը նուիրած էր. Հայ կաթոլիկաց երկպառակութենէն ի վեր այս պատկերը անյայտ եղած էր. սակայն Դերջ. Աղարեան Կաթողիկոս-Պատրիարքը յիշեալ պատկերը պահուած տեղէն հանել տալով, վերստին Ս. Աստուածածին եկեղեցւոյն մէջ կախել տուեր է: Այս պատկերը Ռաֆայէլի գործն է:

— Բուրպան պայրամի տօնին առթիւ Գանձուց պաշտօնական տէրութեան պաշտօնէից ամսական մը վճարելու կաշխատի:

— Լրագիրք ոմանք գրած էին թէ Գ. Ն. էֆ. ռուս սպայի մը դէմ դատ պիտի բանայ իւր աղջիկն առևանգած լինելուն համար:

Ցար կրսէ թէ Գ. Է.Գ. [illegible] տաւորութիւն մը չէ ունեցած տակաւին. և թէև ստոյգ է որ հայրը իւր աղջիկը տեսնել ուզեր է անոր հետ ինչ ինչ կէտերու վրայ խօսելու համար, սակայն իւր բարեկամներն արգիլեր են: Ասոր վրայ հայրը որ իւր աղջիկը կորսնցնելով յուսահատութեան մէջ ինկած էր արդէն, ռուս պաշտօնակալի մը հետևեալ խօսքերն ուղղեր է. «Դուք կը պարծենաք թէ Հայաստանի մէջ քրիստոնեայները քիւրտերու առևանդութեանց դէմ կը պաշտպանէք. երբ այս երկրին մէջ քիւրտ մը առևանդութիւն կընէ, դուք առևանդեալ աղջիկը Հայուն կը դարձնէք. և սակայն հոս Պոլսոյ մէջ թոյլ չէք տար ինձ աղջիկս տեսնելու»:

Ցար կը յաւելու թէ ի վերջոյ հայրը կիրակի օր իւր աղջիկը տեսեր է Ռուսիոյ դեսպանատան թարգմանին ներկայութեան. աղջիկը խոստովաներ է թէ ինքը կատարեալ հաճութեամբ Գ. Փ. ի հետ ամուսնացած է և երջանիկ է:

Ցար կըսէ թէ ասոր վրայ Ներսիսեան էֆէնտի իւր աղջիկը ժառանգութենէ զրկելու համար երդում ըրեր է:

— Թուրքօ-Հելլենական սահմանաց յանձնաժողովոյ անգղիացի պատուիրակ Պ. Արտակ, Տէվլօսէյ և Լըվերսըն Սէլանիկէն մայրաքաղաքս եկան:

— Աստրիոյ խորհրդարանին անդամ Պ. Տումբայի եղբայրն ալ Վարնայի շոգենաւով Վիէննայէն մայրաքաղաքս եկաւ երէկ:

— Անցեալ տարի Պարսից կառավարութեան դէմ ապստամբող քիւրտերը պարսկական հողէն օսմանեան հողը փախած ըլլալով, երկու կառավարութեանց մէջ այս մասին բանակցութիւնք սկսած են կատարուիլ:

— Իզմիտի գաւառին Պաղչէճիկ գիւղի ամերիկացի քարոզիչ Մր. Փիրսը անցեալ տարի կողոպտող ինը չէրքէզներուն դատաստանը կատարուելով Իզմիտի մէջ, հինգը հնդամեայ շղթայակապ աշխատութեան դատապարտուեր իսկ չորսը ազատ արձակուեր են:

— Մայրաքաղաքիս անդղիական դեսպան լորտ Տիւֆըրին և իւր տիկինը որք Իզմիտ ճամբորդութեան գացած էին, [illegible] մայրաքաղաքս վերադարձան:

— Ադրիանուպոլսէն Լէվանթի գրրուած նամակ մը կը ծանուցանէ թէ 3 գունդ հետևակ զօրք Տէտէ-աղաճ մեկնելով, անկէ շոգենաւ մտեր են Տրիպոլիս երթալու համար:

— Պաղղիական կառավարութիւնը Թունուզի զինուորական մթերանոցները քննելու համար Մօրէն զօրավարը այն կողմը ղրկեր է:

— Սթամպուլ լրագիրը որ ժամանակէ մ'ի վեր դադրած էր, երէկ վերստին հրատարակուիլ սկսաւ:

— Սթամպուլ կըսէ թէ Ռուսիոյ պատերազմական տուգանաց խնդրոյն Ցանձնախումբը այսօր վաղը գործի պիտի սկսի:

— Արդէն ղրկուած զօրքերէն զատ ուրիշ զօրքեր ալ պիտի ղրկուին Հիճազ.

— Պուլղարայ Էքզարքը Վիէննայէն Սոֆիա վերադարձեր է:

— Ռուսաց կայսրը Ռօտոսթոյի լատին առաջնորդին Ս. Սթանիզլավի կարգին պատուանշանը շնորհեր է:

— Լա Թիւրքի լրագիրը Քամենտօի կալուածոց մասին խել մը ակնարկութիւններ ըրած ըլլալով Էվքաֆի պաշտօնէութեան, այս վերջինը յիշեալ լրագրին դէմ դատ բացեր է:

— Պաղտատի Զէվրա լրագիրը կը գրէ թէ Միւնթէֆիքներու Շօթրա դաւառը միւտիրութենէ դայմագամութեան վերածուեր է. Ղաղուեցի հրոսակախմբեր Տէլիմցի կոչուած երկրագործ ժողովրդեան վրայ յարձակիլ ուղելով,

տեղւոյն գայմագամը կոնսոլս իմանալով փութացեր է իբր միջնորդ թշնամութեանց առաջքն առնուլ. սակայն հրոսակախումբը դէպ անալով գայմագամը սպաններ է. ասոր վրայ տեղւոյն հրամանատարը օսմանեան զօրօք ապստամբաց վրայ քալեր է, բայց չգիտցուիր թէ յաջողեր է ոճրագործները ձերբակալել թէ ոչ։

— Զէթինեէէն Փուրիէի կը գրեն թէ Ռուսիոյ դեսպանը պաշտօնապէս հրաւիրեր է Գարատաղի Նիքօլա իշխանը որ Բէթերհօֆի պալատան մէջ Ռուսիոյ կայսեր այցելէ. այս ճամբորդութեան նպատակը պիտի ըլլայ Շքօտրայի քաղաքն առնուլ, համանուն լճին տիրելու համար. Ինքնաթիէվ շարունակ կը գրգռէ եղեր իշխանը, որ մտադիր է միանգամայն 2 միլիոն րուպլիի փոխառութիւն մը կնքել։

ԱԶԳԱՅԻՆ

Ռուսիաբնակ Հայ Կրեսոսի մը՝ հանրածանօթ Գ. Սանասարեանցի՝ ձեռամբ Կարնոյ մէջ հաստատել որոշուած միջնակարգ վարժարանը մօտերս բացուած է։ Գ. Սանասարեանցի առաջադրութիւնն էր ձրիապէս 20 Հայ աշակերտ կրթել իբրև գիշերօթիկ, 5ը Կարինէն, 5ը Վանէն, 5ը Տարօնէն։ 5ն ալ ուրիշ բազմահայ կեդրոնէ մը։ Նորահաստատ դըպրոցին մէջ պիտի դասախօսեն այն Հայ ուսուցիչք միայն որք Գ. Սանասարեանցի ծախիւք կրթուած են ի Գերմանիա։ Գ. Յովսէփ Մատաթեան, որ այդ վարժարանի տնօրէնն է, արդէն Վան գնացած է 5 յարմարագոյն աշակերտներ ընտրելու համար, և ուրիշ տեղեր ալ պիտի երթայ նոյն նպատակաւ։ Գ. Սանասարեանցի դպրոցին մէջ թոշակաւոր աշակերտներ ալ պիտի ընդունուին։ Կարնոյ առաջնորդ Գեր. Օրմանեան՝ Գ. Հիմնադրին խնդրանօք՝ ստանձնած է այս նոր վարժարանին ալ վերին հսկողութիւնը։

——

Վանայ Ռուսական հիւպատոս Գ. Կամսարական էջմիածին գնացած է պսակուելու իր աները՝ բժիշկ Յովհաննէսեանի, որ գաղափարակից «Փորձ» հանդէսին հրատարակիչ Գ. Արգար Յովհաննէսեանի հայրն է, և Վան կերթայ հոն հաստատուելու, ինչպէս նաև նորա դուստրն Օր. Գայիանէ, որ Գերմանիոյ մէջ կրթուած և վարժուհւոյ վկայական (տիբլօմ) ըստացած է։ Հայր ու աղջիկ կը խոստանան մեծապէս նպաստել Վանայ ազգային բարոյական վիճակին բարւոքման։

(Մասիս)

——

Նարլը գաբուի Թաղ. խորհուրդը կը ծանուցանէ թէ յառաջիկայ կիրակի, հոկտ. 18, Թաղին Ս. Յովհաննէս Աւետարանիչ եկեղեցւոյ տօնախմբութիւնը լինելով, Գեր. Տ. Խորէն Ս. արքեպիսկոպոս Լուսինեան Ս. Պատարագ պիտի մատուցանէ։

——

Կը լսենք թէ Դատական գործոց խորհրդական Սերովբէ Այնաւոր էֆ. վերըստին հրաժարական տուեր։

——

Ազգ. Ժողովն Ս. Պատրիարք Հօր Փափազեան Ս. էֆէնտիի հետ ունեցած բանակցութիւնը զբաղեցաւ երէկ, այս վերջնոյն մէկ հարցապնդման վրայ որ Ազգ. Պատրիարքարանէն անգղիական դեսպանին տարբեր ժամանակներու մէջ ներկայացեալ երեք վիճակագրութեանց հաւաստութիւնները կը թուէր և Հայկական խնդրոյն համարատուութիւնը կը խնդրէր։

Ասոր վրայ Ս. Պատրիարք Հայրը հեգնական քանի մը ակնարկութիւններ ընելով, Փափազեան էֆէնտի առաւ քալեց և ժողովոյ ամենափոքր մաս մը այս մասին քիչ մը խորհրդածելէ ետքը, ցրուեցաւ։

——

. . . Խմբագիր

Ես իմաստուն մէկը չեմ, ոչ ալ «գրական ասպարիզին մէջ երևնալու քաջութիւնն» ունենալուս կը պարծենամ, բայց համարձակութեամբ կըսեմ թէ, միշտ պատրաստ եմ պատասխան տալու ամենուն, որ ունեցած յոյսիս պատճառը կը հարցնէ, ինչպէս որ Մանուեան էֆէնտի Հայ Ազգին «կենսական շահերովը» բորբոքած բարեհաճած է, Մկրտութեան մատեանն իրեն փող բռնած, հարցնել, թէև զինքը անձամբ ճանչնալու պատիւը վայելած չեմ։

Ընթերցողաց ձանձրոյթ չպատճառելու և ձեր պատուական թերթոյն էջերը «զուարճալիք»ով չի լեցնելու համար, նախ՝ սա կըսեմ թէ քանի որ Մանավեան էֆ. Հայ Ազգին յարգած հայրապետներէն և քրիստոնեայ Հայրերէն տարբերելով «Սրբազնագոյն Մկրտութեան» խնդիրը, կը համարի «կարևորութիւնը շատ տարիներէ ի վեր կորուսած» խնդիր մը և բոլորը կը դասէ այնպիսեաց կարգը որոնք շահասիրութեան և փառասիրութեան գինիովը արբեցած «Ազգին կենսական շահերը» փնտռող ձեւանալով, շուարած Ազգին ականջին «Խաղաղութիւն է, խաղաղութիւն է» կը փսփսան, և այսպէս «Ազգասէր» երևնալ կը փութան. այդպիսեաց համար արդէն «իմ Մկրտութիւն» մատենիս յառաջաբանին մէջ յիշած եմ, որ անոնց նմանիլ չեմ փափաքիր, որն որ եթէ Մանավեան էֆ. ուշադրութեամբ կարդացած ըլլար, դիւրաւ պիտի տեսնէր որ մեծ տարբերութիւն կայ մէջերնիս, և իրեն չի վերաբերած ազդարարութեան մը կամ հրատարակուած մատեանի վրայ երբեք դիտողութիւն մ'ընելու պիտի չհամարձակէր։ Այս պատճառաւ էր որ ես կարևորութիւն չտուի իր առաջին խորհրդածութեանը։

Սակայն տեսնելով որ Մանավեան էֆ. երրորդ անձի մը պատասխանովը գըրգռեալ յամառութեամբ չէ թէ միայն կը շարունակէ իր ընթացքը, այլ նաև անխորհրդաբար կը խօսի իմ անձիս և պաշտօնիս դէմ, պարտ անձիս համարեցի ընթերցողաց դատողութեանը ծանօթացնել իր արժէքը, որն որ անաչառ ընթերցողք դիւրաւ կրնան տեսնել։

Յայտնի է որ Մանուեան էֆ. դեռ չի գիտեր «հեղինակութեան» մը, և «հաւաքածոյի» մը տարբերութիւնը, ինչու որ «Մկրտութեան» մատեանը «հեղինակութիւն» անուանած է, քանի որ գըրքոյկին երեսին վրայ գրուած է խոշոր գրերով հետևեալը, «Քրիստոնեայ ազգերուն և ժողովուրդներուն Մկրտութեան վարդապետութիւնները և արարողութիւնները». որուն նպատակը այս է, որ ընթերցողք իրենց ձեռքը ունենալով քրիստոնէից մէջ ընդունուած Մկրտութեան արարողութիւնները և վարդապետութիւնները, կարող ըլլան բաղդատել զանոնք Աստուծոյ անսխալ ճըշմարտութեան բանին հետ, և ոչ թէ Շիշմանեանի մը հեղինակութիւնը կարդան, որուն համար արդէն ըսի որ իմաստուն մէկը չեմ, և հեղինակութիւն ալ չունիմ. աներկբայ է որ Մանավեան էֆէնտի այս պատճառաւ «անպայման հակասութեան» մէջ ինկած, կը կարծէ թէ ուրիշի մը պատահած է այդ դժբաղդութիւնը։

Եթէ լսածս իբրև ստուգութիւն մի կարենամ հաւատալ, Մանավեան էֆ. Հայ ազգին Կրօնագիտութեան դասատուներէն մին է. սակայն ափսո՜ս որ ինքը դեռ սորված չէ թէ ի՞նչ ըսել է «Աւետարանիչ», և իր այս խարխաբելի տգիտութիւնը կը յայտնէ հեգնական կերպով զիս «Հինգերորդ աւետարանիչ» կոչելով. եթէ Մանավեան էֆ. գոնէ մասամբ իւիք ճանչցած ըլլար իւր պաշտօնը, պիտի գիտնար որ ինքն ալ «Աւետարանիչ» մ'է, քանիերորդ որ կուզէ ըլլալ թո՛ղ ըլլայ, քանի որ ազգին մէջ Կրօնագիտութեան դասատուի մը պաշտօնը կը վարէ. ինչու որ Հայ ազգին կրօնքը քրիստոնէութիւն է և ոչ թէ Մ... կամ ուրիշ կրօնք մը. թէև իւր կրօնքը ուրիշ բան մը եղած ըլլայ։

Այս է իմ առաջին և վերջին պատասխանս Մանավեան էֆ. ի նման Կրօնագիտութեան դասատուի մը փքանցը, որ չէ՛ թէ «ընթերցողաց միտքը պահ մը զըւարճացնելու համար» կը գրեմ, ինչու որ այդ արհեստը կերևայ թէ Մանավեան էֆ. ի սեպհական զբաղմունքն է, այլ Թշուառ ազգիս «կենսական շահերուն» նախանձախնդիր լինելով ձայն կը վերցնեմ զինքը դարևոր քունէն արթընցնելու, որ տեսնայ իւր եղկելի վիճակը և «Հօտին չխնայող յափշտակող գայլերու» ձեռքէն ազատէ ինքզինքը և իւր զաւակունքը։

Երբէք փոյթ չէ՛ ինձ Մանավեան էֆ. ի և նորա հետևողաց դատողութիւնը, իմ սրբազան պարտաւորութիւնս է ըսել թէ, քանի որ Հայ ազգը իւր կրօնագէտ ուսուցիչներուն առաջնորդութեամբը ամենակարող Աստուծոյն աջէն ուխտադրուժ գտնուած է, և Քրիստոս Յիսուսի սուրբ եկեղեցիներուն մէջ օտար և աւելորդ արարողութիւններով Աստուծոյ բարկութեանը տակ ինկած է, ինչպէս էին հրէայք, Բաբելոնի գերութեանը տարուելէն յառաջ, երբէք պիտի չկարենայ իրեն «կենսական շահերը» բարւոքել, մինչև որ իւր դարևոր թմրութենէն չսթափի, և իւր հայրերուն կենդանի Աստուծոյն չդառնայ։ Այս պատճառաւ է որ յանձն առած եմ զանոնց

փոխարէն մ՚ընդունելու ազգէս, ձրիաբար Քրիստոս Յիսուսի Աւետարանը քարոզելու ։

Խմբագիր, բարեհաճեցէք ներկայս հրատարակելու յօգուտ Ազգիս ։

Մնամ՝ յարգանօք
Գէորգ Ն. Շիշմանեան
14 Հոկտ. 1881 Աւետարանիչ
Կ. Պոլիս

ԻՄ ՄՏԱԾՈՒԹԻՒՆՔ

ԼԹ.

ԱՐՈՒԵՍՏ ԵՒ ԳԻՏՈՒԹԻՒՆ

— «Հա՞ց թէ ուսմունք, արուե՞ստ թէ գիտութիւն» — կը կոչեն ոմանք և շատեր ալ լռելեայն հաւանութիւն կուտան ։ Եւ մեք կըսենք, ահա ճիշդ այդ բառերով կսկսին սխալ գործել ։

Մանուկներուն կը հարցուի շատ անգամ — Մա՞յրդ կը սիրես թէ հա՛յրդ — մանուկը բնականաբար պիտի սիրէ մին կամ միւսն, այսինքն զնա որ աւելի իւր քմաց համեմատ կը շարժի ։

Արդ ինչպէս որ մանկան պատասխանը սխալ է, այսպէս ևս սխալ է ըսել «Հա՞ց թէ ուսմունք», զի մին միւսին պատճառն է ու առանց հօր մանուկ կըլլայ ու առանց մօր մանուկը կեանք կունենայ, զի երկոքին ևս անբաժանելի են ։

Եւ այնպիսի երկիր մը, օրինակ մեր Հայաստանը, յորում թէ՛ արուեստ և թէ՛ գիտութիւն՝ բաղդատաբար արևմտեան քաղաքակրթեալ և բարգաւաճեալ երկիրներու, տակաւին խիստ յետադէմ՝ վիճակի մէջ են, յորում արուեստք եթէ Նոյ նահապետի դարուն ժամանակակից են, գիտութիւնք ևս անդանօր անապատական վիճակ մ՚ունին ուրեք ուրեք գտնուած ովասիսներն ի բաց առնելով, կը հարցնենք, տղայամտութիւն չէ՞ ըսել «Հա՞ց թէ ուսմունք, արուե՞ստ թէ գիտութիւն» ։ Ահա ճիշդ այդ տեղ է մեր սխալն ։ Քանի որ մեր երկիրն այդ երկու մասամբ ևս թափուր վիճակի մէջ կը գտնուի երկոքին ևս անհրաժեշտ կերպով հարկաւոր են. ուստի նախ մեր վերտառութիւնն ուղղենք որպէս զի մեր յետոյ ըսելիքն ալ ուղղուի և ըսենք «Հաց և ուսում, գիտութիւն և արուեստ» ։

Սոյն կէտն աւելի պարզ՝ աւելի կլորիկ և աւելի ազդութեամբ բացատրելու համար գոգցես մեր հայերէն լեզուն զարմանալի գիտմամբ կամ դիպմամբ երկու բառով օժտուած է, որոյ կիրառութեամբ կրնանք շատ մը հատորներով բացատրուելիք ընդարձակ տեսութիւններ բացատրել երբ ըսենք «դրամ և մարդ», դարձո՛ւր տառերը և դարձեալ պիտի գտնես «մարդ և դրամ» ։

Եւ ամեն երկիր այս երկու բառերուն կը կարօտին և կը պարտին իրենց բոլոր յառաջդիմութիւններն, դրամ ունի՞ս մարդ ևս ունիս, մարդ ունի՞ս դրամ ևս ունիս ։ Ուշադիր ընթերցողն կրնայ մակաբերել ի հարկէ թէ «դրամ» ըսելով ինչ պէտք է հասկնալ, նոյնպէս «մարդ» ըսելով ինչ հասկցնել կուզենք ։

Տօքթէօր Փէշտիմալճեանի յայտնած տնտեսական բարւոքման խնդիրն նոր բան չէր. մեր մէջ շատ խնդիրներ կը յուզուին պարբերաբար ոյց ոմանք «ձայն բարբառոյ յանապատի» կըլլան, և շատերն ալ մեր քննադատողաց ուշիմութենէն և ճարտարութենէն բաւական ատեն առ խարխափ ընթանալէ յետոյ մին՝ միւսին քէն կընէ և ասպարէզէն կը քաշուի, ինչպէս որ փողոցի տղայք միմեանց հետ կը սրդողին և կը հեռանան, այսպէս ևս մեր մէջ շատ խնդիրներ վիճաբանութեան կենթարկուին և առանց որոշ եզրակացութեան մը հասնելու և կամ այսպէս ըսենք, առանց միմեանց խօսք հասկնալու կը փակուի և կը թաղուի խնդիրն մինչև որ բաւական ատեն անցնելէ յետոյ նորէն վերսկսուի վիճաբանութիւն, նորէն զաւեշտին երկրորդ տեսարանը բացուի ։

Ինչ որ է, բայց մեք եթէ ոչ հաւատք գէթ յոյս ունինք որ հետզհետէ պիտի վարժուի մեր ազգն ալ վիճաբանութեան և այսպէս օր մը կարող քննադատներ պիտի ունենանք մեր գրական համեստ դարաստանին մէջ, զի մամուլը քննադատութեան անձնաւորութիւնն է ։

Մեր սոյն տողերէն ինչպէս կը հասկցուի, մեք ոչ միոյն և ոչ միւսոյն՝ այլ երկու կողմին ևս կուսակից եմք, մտի՛ր Հայաստան աշխարհ մէկ ծայրէն միւս ծայրը, կրնանք դժբաղդաբար համարձակ ըսել, անապատ դարձած է թէ գիտութեան և թէ արուեստի այսինքն թէ մարդու և թէ դրամի կողմանէ ։ Ուրեմն եթէ Հայաստանի ժողովրդեան միայն տնտեսական մասը մտածենք մտաւորական մասն բարձի թողի ըրած կըլլանք, նոյնպէս եթէ լոկ մտաւորական մասը մտածենք տնտեսական մասը իսպառ լքեալ վիճակի մատնած կըլլանք ։

Սոյա միջին ճամբան, երկոցունց ևս ջանք և խնամք տանելուն մէջ կը կայանայ ։ Մեծ. Տօքթէօր Փէշտիմալճեան իւր կարևոր յօդուածին մէջ կըսէր,

«Պէտք է ուրեմն ամեն գաւառացի Հայ իւր տեղական պիտոյից յարմար եղանակաւ կրթուի, որպէս զի նիւթական զարգացմամբ նա կարող լինի նախ՝ տիրել բարոյապէս զինքն շրջապատող ցեղերու վրայ» ։

Այն ամեն ժողովուրդ որ նիւթապէս զարգացեալ վիճակ մ՚ունի կը տիրէ բարոյապէս զինքն շրջապատող ցեղերու վրայ ։

Հայաստանի գաւառաց մէջ ամենէն աւելի հարստահարութիւն և բռնութիւն այն կողմերն աւելի կը տիրեն ուր որ ժողովուրդն բաղդատապէս աւելի աղքատ է ։ Աղքատներն ընկճեալ և հարստահարեալ են ամեն երկրի մէջ և Թուրքին առածը շատ պատշաճաւոր կը թըուի մեր այս ըսածին երբ կըսէ (փէ՛ր ապալըեա) ։

Հայ ժողովրդեան ամենէն աղքատ մասը կը բնակի Տիգրանակերտի, Բաղիշոյ և Վանայ նահանգաց շրջակայ գաւառաց և գիւղօրէից մէջ, հա՞րկ է ըսել որ ամենէն աւելի ճնշումներ և հարստահարութիւններ այս կողմերը տեղի կունենան ։

Աղքատ մարդը չէ կարող ոչ իւր իրաւունքը և ոչ իւր անձը պաշտպանել օրինաւորապէս և պատշաճապէս, հետևաբար մինչև որ ժողովրդոց տնտեսական վիճակը չը բարւոքի կարելի չէ որ ըստ արժանւոյն անդորր և ապահով կեանք վարեն ։

Նկուն և գառնուկի պէս ժողովրդեան ձեռքը դրամ տուր և տե՛ս թէ ինչպէս առիւծ կը դառնայ. ուրեմն հարստահարութեանց գլխաւոր դարմաններէն մէկն և գուցէ առաջինն եթէ ժողովրդեան տնտեսական վիճակի բարւոքումն է ըսենք յայտնի ճշմարտութիւն մը խոստովանած կըլլանք ։ Խ. Ց. Ս.

1 Սահմի 4374

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Քաշկարի վախճանեալ Էմիրին որդին Ալի Ղուլի խան վեհ. Սուլթանի Թիկնապահ Ալի պէյի և ուրիշ մի քանի բարձրաստիճան զինուորականաց ընկերակցութեամբ մասնաւոր շոգենաւով Էյուպի մզկիթը երթալով աղօթեր, յետոյ տեղւոյն Շէրիֆին և Տէրվիշներուն այցելութիւն ըրեր է ։

— Վագըթ կըսէ թէ Տիգրանակերտի կուսակալին դէմ շատ մը գանգատներ եկած են այս օրերս ։

— Անցեալ շաբթու մէջ Միջերկրական ծովէն 64 շոգենաւ եկաւ նաւահանգիստըս, ասոնցմէ 56ը անգղիական, երկուքը Հելլեն երկուքը Ռուս մին Նորվեկիոյ մին Շուետի մին Պելճիգայի և միւսը գաղղիական դրօշներ պարզած էին ։ Ասոնք Սև ծով, անկէ Ազախու ծով և Դանուբ մեկնեցան ։ Իսկ առագաստաւոր նաւերու թիւն է 140, որոց 80ը Հելլեն 40ը իտալական 15ը անգղիական, 6ը աւստրիական, միւսներն ալ գաղղիական դրօշ կը կրէին ։

— Վագըթ կըսէ թէ Կիպրոսի հասոյթը պարտատեարց տալու համար Անգղիոյ Գաղղիոյ և Բ. Դրան միջև բացուած բանակցութիւնը յաջողութեամբ յառաջ կերթայ, և յուսացուածէն աւելի յաջողութեամբ պիտի վերջանայ. Թէև այս խնդիրը ուղղակի Բ. Դրան և Անգղիոյ միջև լուծուելիք խնդիր մ՚էր, սակայն Բ. Դուռը տեսնելով որ Անգղիա երաշխաւորած փոխառութեանց փոխարէն գրաւել կուզէ, գիտել տուաւ թէ Գաղղիա ալ միևնոյն պարտուց երաշխաւոր ըլլալով, պէտք է որ նա ալ մասնակցի բանակցութեան, իւր այս առաջարկն ընդունուելով խնդրոյն յաջողութեամբ լուծուելուն մեծապէս նպաստեց ։

— Գանձային խնդրոյն բանակցութիւնը կը շարունակուի. բոլոր փոխառութեանց առանձին առանձին զեղչեր ընել որոշուեր է. նախ 1858ի փոխառութիւնը համաձայնութեամբ 100ը 85ի իջեցուցեր են. յետոյ 60ի փոխառութեան վրայ պատուիրակաց մէջ անհամաձայնութիւն ծագեր է. օսմանեանք 100էն 52է աւելի հաշուել չեն ուզեր մինչդեռ եւրոպացի փոխանորդք պնդեր են թէ առ նուազն 100ը 62ի իջեցնելու է. 62ի փոխառութիւնը 100ը 68էն հաշուել որոշուեր է. իսկ 63ի և 64ի փոխառութեանց վրայ դարձեալ անհամաձայն գտնուեր են պատուիրակները, Օսմանեանք առաջնոյն համար 68 առ 0/0 և երկրորդին համար 65 առ 0/0 տալ պնդեր են, սակայն փոխանորդք երկուքին համար ալ 72 առ 0/0 և 65ի փոխառութեան համար 66 առ 0/0 պահանջեր են, իսկ օսմանեանք $63\frac{1}{2}$ առ 0/0 տալ առաջարկեր են ։ Հուսկ ուրեմն 69ի փոխառութեան համար 60 ու կէս առ իւրաքանչիւր հարիւր խնդրեր են եւրոպացիք, իսկ օսմանեանք 52,95 առ 100 տալ միայն յանձն առեր են ։

ԴԱՂՂԻԱՐԷՆ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑՈՒՄՆ

Վարժուհեանց Մէխթարի վրայ

ՁԵՌԱՄԲ ՆՈՐԱՅՐԻ ԲԻՒԶԱՆԴԱՑԻՈՅ

Անուանի հեղինակի

Գաղ. Հայ Նոր բառագրքին

Գաղղիարէն լեզուի համաշխարհային պէտքն ու օգուտները ամենուս ալ ծանօթ ըլլալով, հարկ չկայ հոս ես այն մասին բացատրութեան մտնել։

Մեր ազգին համար խօսելով, ցաւալի է տեսնել շատեր, որոնք սոյն օգտակար լեզուին մէջ մտած և խել մը տարիներ վատնելէ ետև տեսականին մէջ բաւական վարժ. իսկ ընթացիկ խօսակցութեան (բրաթիքը) բոլորովին անվարժ մնացած են։

Այսպիսեաց և միանգամայն սոյն լեզուն բնաւ իսկ չգիտցողներու առջև ահաւասիկ ասպարէզ մ' ուր տարակոյս չկայ թէ վերոյիշեալ մէթոտն ու Նորայր Բիւզանդացւոյ անուանի գաղղիագիտին անունը միայն բաւական պիտի լինին ուսանելու ցանկացողներն վստահեցնելու թէ փափաքնին «քիչ ժամանակի մէջ» ճշմարտապէս պիտի յջուի յաջողեալ դասարանի մը մէջ, ուր վաճառականութեան յատուկ եղող լեզուին ճիւղն ալ պիտի աւանդուի։

Դասերն ամենօրեայ են, օրը 1 ժամ, առաւօտները ժամ $2^1/_2$ էն մինչև $3^1/_2$, առ այժմ, տարւոյն ուրիշ այլ և այլ եղանակաց մէջ ալ սոյն համեմատութեամբ։

Դասարանն է Պոլիս Պաղչէ դաբուն ճէլալ պէյ խանի վերնայարկը։

Պիտի բացուի հոկտ. 20ին (ըստ Յունաց), երբ դասառուաց թիւը 20էն պակաս չէ։

Մինչև հոկտ. 20 դասառու գրուողին համար ամսական 1 Օսմ. լիրա է, իսկ նոյն թուականէն յետոյ գրուողին 1 ու կէս լիրա։

Իւրաքանչիւր ամսական կանխաւ վճարելի է։

Վերջ ամսական մէկէն վճարողին երկու լիրա գեղչ պիտի ըլլայ։

(Դասարանի բացումէն մինչև 5 օր առաջ գրուող ու վճարողին առաջին մէկ ամսականին համար միայն 1/4 Օսմանեան լիրայի զեղչ մը պիտի ըլլայ)։

Փափաքողք կը հրաւիրուին Պոլիս Ուզուն չարշու թիւ 362 Ֆրէնկեան գրատունը, առ Գ. Ս. Ֆրէնկեան կամ առ Տ. Յ. Բափամաճեան։

7/19 հոկտ. 1881. Տնօրէնութիւն

Կ. Պոլիս

ԱՄՈՒՍՆԱՑԱՆ ԱՌՈՂՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԱՌԱՋՆՈՐԴ ԱՌՆ ԵՒ ԿՆՈՋ

Հեղինակ Տօքթէօր Լ. Գլէման Բարիզի բժշկական ճեմարանէն. Թարգմանեց 1877ի տպագրութենէն Ե. Արմաւիր։

Թէ ինչ պէտք է գիտնան ամուսնացողք իրենց ամուսնութեան նախընթաց օրը. — Ինքզինք սիրցնելու միջոցները. — Ամուսնութեան ազդեցութիւնն ամուսնոց ֆիզիքականին և բարոյականին վերայ. — Ծննդական գործարանաց առողջաբանութիւն. — Անկարողութիւն և իւր դարմանները. ևն. ևն։

Սոյն խիստ օգտակար գիրքը որ թէ ամուսնացելոց և թէ ամուսնութեան պատրաստուողներու ընթերցման անհրաժեշտ է կը ծախուի ամէն գրավաճառի քով. Գին 8 ղուրուշ։

Նորայրի Գաղղիերէն-Հայերէն բառարանին 73րդ թերթն հրատարակեցաւ, որ կը հասնի մինչև ի բառն «Malorbat»։ Գին 73 թերթերուն $109^1/_2$ ղըշ. արծաթ։ Բաժանորդ գրուիլ ուզողներն դիմելու են առ Մեծ. ահղանաւորս Գ. Ս. Սամանճի-Մոմճեան, 4, Մէհմէտ Ալի փաշա խան, Ղալաթիա. կամ առ Մեծ. Գ. Ֆրէնկեան գրավաճառ, Ուզուն չարշը, Պոլիս։ Բաժանորդութեան գինն է $1^1/_2$ օսմ. ոսկի վճարելի կանխիկ, իսկ գին իւրաքանչիւր թերթին է 60 փարայ։

ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

Բոլոր Քրիստոնեայք կընդունին թէ Մկրտութիւնը Քրիստոսի եկեղեցւոյն դուռն է, ուրկից ներս կը մտնեն բոլոր հաւատացեալք, քանզի տէրունական պատուէրն է «Ան որ հաւատայ ու մկրտուի, պիտի փրկուի»։

Այս կարեւոր պատուէրը ըստ արժանւոյն սորվելու համար պարտինք առանց նախապաշարման ԳԻՐՔԵՐԸ ՔՆՆԵԼ. բայց, որովհետև շատ քիչերը արտօնութիւն և ժամանակ ունին քննելու, Աւետարանիչ Գէորգ, Ն. Շիշմանեան հին և նոր Քրիստոնեայ ազգաց և ժողովրդոց մկրտութեան վարդապետութիւնները և արարողութիւնները գրքոյկի մը մէջ հաւաքելով կը նուիրէ իւր սիրելի ազգին մեծաւ յարգանօք։ Գինն է 5 ղըշ. և կը ծախուի բոլոր գրավաճառաց քով, կամուրջին գլուխը Սուճի Պօղոս աղային խանութը, և Ղալաթիոյ Մաքսատան փողոցը թիւ 16, Հայկական թղթավաճառանոցը։

ՄԻՆԱՍ ՋԵՐԱՋ
ԳՐԻՉ ԵՒ ՍՈՒՐ

Արամեան տպարանէն ելած այս հեղինակութիւնը նուիրուած է Հայ մայրերուն։ Բանասիրական և վիճաբանական բազմաթիւ յօդուածներէ զատ, կը պարունակէ ընդարձակ և հետաքրքրաշարժ ներածութիւն մը, որոյ գլխաւոր նիւթերն են. — «Գրական փորձեր» ու յարուցած պայքարն, Ս. Ոսկանեանի մի անտիպ նամակն ի նպաստ աշխարհաբարեանց, 1855ի Պատրիարքական հալածանքն ի նպաստ գրաբարեանց, Կովկասեան յեղափոխութեան պատմութիւնն, վարժապետական խնդիր, Արարատեան ընկերութեան ծագումն, լեզուի բարենորոգում, հեղինակին՝ ազգային պաշտօնով երկրորդ ուղևորութիւնն յԱնգղիա, Տեսակցութիւնք անգղիացի Ֆրէնսիսըն դրագէտին հետ, Անգղիոյ Ջինկեանէներու լեզուին զար ճանալի նմանութիւնք Հայերէնի հետ, Ֆրէնսիսընի Հայերէն սորվիլն և ի նպաստ Հայերէնի գրած նամակն, լեզուապայքար, Անահիտ և Արամազդ, Գարագաշեան և Փէշեան, են. են.

Կը ծախուի բոլոր Պոլսոյ հայ գրավաճառաց քով. Ղալաթիա Բօմոնթի խանի եաւը թիւ 23 Վլոյրի թղթավաճառանոցը և Բերա Դիւնէլի դիմացը Պ. Պօտէնի գրատունը։ Գին 8 ղրուշ։

ՏԷՐ-ԽՄԲԱԳԻՐ
Մ. Յ. ՄԵԼԻՔԵԱՆ

Րիզա փաշա խան թիւ 14

ՓԱՆԱՍԷ

ԴԵՂ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՒ ԴԵՂ ՍԱՄԱՐԱՑԻՈՅՆ

Կը ծախուի Մինասեանի և ընկերաց Ամերիկեան վաճառատունը ի Ղալաթիա Կ. Պոլսոյ։ Փանասէն իւր օգտակարութեամբն, ինչպէս Ամերիկայի և Եւրոպիոյ, նոյնպէս և Թուրքիոյ այլ և այլ կողմերը մեծ ընդունելութիւն գտած է։

Փանասէն գեղացւոյն և զաւառացւոյն բժիշկն ու բարեկամն է, և մեծ օրհնութիւն մը համարուած է այն տեղերուն համար, ուր բժիշկ ու դեղ և դարման հազիւ կը գտնուին։ Փանասէն բուսեղէններէ բաղադրեալ լինելով բոլորովին անվնաս է։ Փանասէն այրածին ցաւը կ'առնէ ու քիչ ատենի մէջ կը բուժէ. նոյնպէս և մարմնոյն կտրուած ու ճմլուած տեղերուն ցաւն ու բորբոքը շուտով կ'անցնէ։

Ջղային, յօդային և ոսկրային սաստիկ ցաւերը բուժելով տաղնապեալը կը հանգարտեցնէ։ Ստամոքսի, փորի և աղեաց ցաւերը կը կտրէ ու պաղէ յառաջ եկած դժուարութեանց առաջքը կառնու։

Փանասէն ակռայի սաստիկ ցաւերը շուտով կը բուժէ։ Մարմնոյն կտրուած կամ վիրաւորեալ կողմերն սաստ փանասէ քսելով շուտ կը բժշկուին ու կը դոցուին։ Փանասէն կը բժշկէ նաև փորհարութիւն, թանչք, հազ, ջերմ, կոկորդի բորբոք և ուռեցք, մէջքի ցաւեր, և այլ զանազան ախտեր, որոց սկզբնապատճառը գրեթէ նոյնն են։ Այսպէս կը վկայեն շատեր, որք փորձած են։ Ընտանիք իրենց տան մէջ ու պանդուխտք և ճանապարհորդք իրենց մօտ փանասէ պահելով և յանկարծական դժուարութեանց ատեն գործածելով մեծ օգուտ կը քաղեն և ծանր հետեւանաց առաջը կառնուն։ Փանասէն հեղուկ է, որ թէ՛ մարմնոյն վրայէն քսելով և թէ՛ խմելով ալ բժշկութիւն կը գործէ։

Գործածութեան կերպը հետն է։ Գլխաւոր վաճառատեղին է, Ղալաթիոյ Եէնի-Ճամիի դրան կից Մինասեանին Ամերիկեան վաճառատունը, նաև մայրաքաղաքիս դեղագործաց քով ու գաւառներն ալ կը գտնուին։